գործ դրուած լինէր մի հաւի, մի այծի եւ մինչեւ անգամ մի շան պարանոցի վրայ, անտարակոյս անպատիժ չէր մնալու չարագործը: Բայց հայ մարդը — գաւուրը — աւելի ստոր էր այդ անասուններից: Նա տէր չունէր, նա գին չունէր. նրա հետ կարելի էր անել ամէն բան եւ անպատիժ մնալ...

Իմ քեռիները արհեստով զինագործ էին. այդ արհեստը ժառանգաբար անցել էր նրանց տոհմի մէջ, եւ հարիւրաւոր տարիների ընթացքում զարգացել եւ բաւական կատարելագործուել էր: Պարսկաստանում, ինչպէս եւ Տաճկաստանում, առհասարակ բոլոր զինագործները հայեր էին. նրանք զէնք էին պատրաստում իրանց թշնամիների համար, որոնք թէեւ շինելը չէին իմանում, բայց գործ ածելու մէջ շատ հմուտ էին: Ես միշտ մի առանձին բարկութեամբ էի մտածում այն աղէտալի անցքի մասին, թէ անպատճառ մի հայ արհեստաւորի ձեռքով պէտք է շինուած լինէին այն դաշոյնները, որոնցով փորձ փորձեցին իմ հօր պարանոցի վրայ:

Իմ քեռիները մեր գաւառի նշանաւոր զինագործներն էին, այդ պատճառով նրանց արհեստանոցը ամբողջ տարի միշտ գործ եւ աշխատութիւն ունէր: Արհեստանոցը զետեղուած էր տան գլխաւոր մուտքի գաւիթում եւ բաժանւում էր կանանոցից առանձին բակով: Այստեղ միշտ կարելի էր տեսնել մի խառնիճաղանջ բազմութիւն, բաղկացած պարսիկներից, թուրքերից եւ քրդերից, որոնք բերել էին իրենց զէնքերը շինել տալու: Հեռու կամ օտար երկրներից եկողները այնտեղ մնում էին օրերով եւ շաբաթներով մինչեւ կը պատրաստուէին նրանց զէնքերը: Այս վերջիններից շատերը կերակրւում էին քեռիներիս սեղանից եւ մինչեւ անգամ փող չէին վճարում նրանց աշխատութեան համար: Ես փոքր ժամանակս չէի կարողանում հասկանալ, թէ ի՞նչ նշանակութիւն ունէր այդ նահապետական հիւրասիրութիւնը՝ համ ձրի աշխատել, համ կերակրել, համ փող չստանալ: Յետոյ հասկացայ, որ այդ հիւրասիրութիւնը ցոյց էին տալիս ոչ բոլորին, այլ նշանաւոր անձնաւորութիւններին միայն: Խաների, բեկերի, սէիդների, շէյխերի եւ զանազան քուրդ ցեղապետների համար աշխատում էին ձրի: Դրանք մահմեդական ժողովրդի առաջնորդներն էին, դրանց պէտք էր քաղաքավարի կերպով կաշառել, դրանց բարեսրտութիւնը պէտք էր գրաւել, որպէսզի կարելի լինէր դրանց շնորհիւ հասարակ մահկանացուներից վարձատրութիւն ստանալ: Հակառակ դէպքում անհնար էր գործել, առաջնորդները կարող էին հրամայել, որ բոլորովին ձրի աշխատեցնեն արհեստաւորներին կամ զանազան շառեր կը սարքէին: Իսկ այժմ ոչ մի թուրք, ոչ մի պարսիկ, եւ ոչ մի քուրդ չէր համարձակւում իր վճարը չհատուցանել, որովհետեւ գիտէր, որ պետերը յարգում են, պաշտպանում են վարպետ Բաբային. այսպէս էր իմ մեծ քեռու անունը: